

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (№ 7)

10 հունիսի 2016թ.

Ժամը՝ 17⁰⁰

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառուց դպրոցի ամբողջական կահավորում» ծրագրի մասին:
(Արմինե Դարբինյան)
2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բազմազավակ քսանյոթ ընտանիքների համար կառուցվող առանձնատների ամբողջական կահավորում» ծրագրի մասին:
(Արմինե Դարբինյան)
3. Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին:
(Էդմոն Ազարյան)
4. «Ընտանիք և համայնք» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մեծամորի համայնքային զարգացման կենտրոնի համար հավաքովի տան կառուցում» ծրագրի մասին:
(Քնարիկ Գարանֆիլյան)
5. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը» ծրագրի մասին:
(Սուրեն Նալջյան)
6. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատուց բաշխում» ծրագրի մասին:
(Սուրեն Նալջյան)

7. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին
(Արման Բարխուդարյան)

- 7.1 «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված բեռների ներմուծման ծրագրի մասին:
- 7.2 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 3):
- 7.3 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 4):
- 7.4 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 3):

- 7.5 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարն» հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):
- 7.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (N 1) («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):
- 7.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (N 2) («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):
- 7.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):
- 7.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 7.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 1 («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 7.11 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 2 («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 7.12 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 1 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):
- 7.13 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 2 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):
- 7.14 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 3 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

- 7.15 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն):
- 7.16 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արմենիա Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ):

8. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին (Արման Բարխուդարյան)

- 8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-026-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):
- 8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-916-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն):
- 8.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-490-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Երևան իմ սեր» հիմնադրամ):
- 8.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 2 (Հայաստանի մանուկների հիմնադրամ):
- 8.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի N Մ-237-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 2 («Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպություն):
- 8.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):
- 8.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

- 8.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):
- 8.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ):

9. Այլ հարցեր

- 9.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-063-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):
- 9.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1122-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):
- 9.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-426-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Երևան իմ սեր» հիմնադրամ):
- 9.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 29-ի N Մ-286-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):
- 9.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-433-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):
- 9.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 23-ի N Մ-440-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հունիսի 2016 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

Ձ. 7/1

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՅ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՍՕՍ
ԳՅՈՒԴԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԴՊՐՈՑԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ
ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունիսի -ի N 07/80-2/ -16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունիսի -ի N 03/14/ -16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի -ի N 06/3-4/ -16 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 15,245,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառուց դպրոցի ամբողջական կահավորում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2016 թվականի մայիսի 5-ին կնքված N ԼՂ-Կ-Հ-02/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դպրոցական գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի դպրոցում՝ 15,245,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Հ Ա Ս Տ Ա Ս Վ Ա Ս Է



**«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառուց
դպրոցի ամբողջական կահավորում»**

ԾՐԱԳԻՐ	
1. Ծրագրի նպատակը	Ապահովել մեր կողմից կառուցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի դպրոցը ամբողջաժեշտ կահույքով
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3. Բարեգործը	Ամհատ բարերարներ, ֆիզիկական և իրավաբանական անձիք
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. երևան, Կառավարական տուն N 3, ԳՎՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, կրթության բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է՝ 15.245.000,00 դրամ:

Ձ. 7/1



Ձ-7/1

0010, Երևան, Մեփր-Աղայան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

06.06.16 № 07/80-2

Ձեր № 15763-16

«Հատվարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.06.2016թ. N 15/15.1/7808-16 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառուց դպրոցի ամբողջական կահավորում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

Կառավարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

034/15293-16

Ձ-7/1

7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի դպրոցը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ մայիսի 05-ից մինչև 2017թ. օգոստոսի 05-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիսաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2016թ մայիսի 05-ից մինչև 2017թ.օգոստոսի 05-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառուց դպրոցի կահավորում 15.245.000,00 ՀՀ դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) արդյունքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀՄՏՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 15.245.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (ետանյալային եւ անփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակամ՝ Արմինա Ղարեբյանը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ arsen.mkrtyan@justice.am

06.06.16 N 02/14/6894-16

Ձեր N _____

21.7/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 1-ի 15/15.1/7808-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառույց դպրոցի ամբողջական կահավորում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-115

025/15321-16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

21.7/1

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

06/3-4/17302-16

04.06.16

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 01.06.2016թ. N15/15.1/7808-16 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղի նորակառույց դպրոցի ամբողջական կահավորում» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոնյան

Շրջակայքերի բաժին, հեռ. 011800330

044/15370-16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հունիսի 2016 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

Ձ-7/2

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ՔՄԱՆՅՈՑ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԱՌԱՋՆԱՏՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ
ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունիսի -ի N 07/80-2/-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունիսի -ի N 03/14/-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի -ի N 06/3-4/-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 167,292,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեննային Ղարաքաղի Հանրապետության բազմազավակ քսանյոթ ընտանիքների համար կառուցվող առանձնատների ամբողջական կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2016 թվականի հունիսի 1-ին կնքված N ԼՂ-Կ-03/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում Լեննային Ղարաքաղի Հանրապետության բազմազավակ քսանյոթ ընտանիքների համար կառուցվող առանձնատներում՝ 167,292,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեննային Ղարաքաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Հ Ա Ս Մ Ս Վ Ա Ս Ը Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Կրա Կարդանյան
«03» հոկտեմբերի 2016թ.

« Լեննային Ղարաքաղի Հանրապետության բազմազավակ քսանյոթ ընտանիքների համար կառուցվող առանձնատների ամբողջական կահավորում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	Ապահովել Լեննային Ղարաքաղի Հանրապետության հինգ և ավելի երեխա ունեցող քսանյոթ ընտանիքների համար կառուցվող առանձնատները ամբողջաբար կահույքով
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային պրտություններից
3. Բարեգործը	Չանգամակություններից ստացված միջոցներ
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ԳՎՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լեննային Ղարաքաղ, սոցիալական բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 167.292.000,00 դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Լեննային Ղարաքաղի Հանրապետության հինգ և ավելի երեխա ունեցող քսանյոթ ընտանիք

Ձ-7/2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ձ. 7/2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Շեռ. (+374 60) 700 255

09.06.16 № 04/80-29
Ձեր № 16100-16

«Հատվարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.06.2016թ. N 15/15.1/7994-16 գրության՝ կապված «Հատվարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բազմազավակ քսանյոթ ընտանիքների համար կառուցվող առանձնատների ամբողջական կահավորում ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

Կատարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

024/15652-16

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հունիսի 01-ից մինչև 2017թ հունիսի 01-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2016թ հունիսի 01-ից մինչև 2017թ հունիսի 01-ը ընկած ժամանակահատվածում վերոնշյալ առանձնատների ամբողջական կահավորում՝ 167.292.000,00 դրամ արժեքով
10.	Չեղք բեղվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելվածի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ ամհատույց տեղադրում՝ 167.292.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ձ. 7/2

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդակամ՝

Արմինա Դարբինյանը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ arsen.mkrtyan@justice.am

06.06.16 N 02/14/6869-16

Ձեր N _____

Մ. 7/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 3-ի 15/15.1/7994-16 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բազմազավակ քսանյոթ ընտանիքների համար կառուցվող առանձնատների ամբողջական կահավորում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՅԱՆ

025/15295-16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ. 7/2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

06/3-4/17656-4

09.06.16

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 03.06.2016թ. N15/15.1/7994-16 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բազմազավակ քսանյոթ ընտանիքների համար կառուցվող առանձնատների ամբողջական կահավորում» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոմյան

Ընթացակարգերի բաժին, հեռ. 011800330

044/15734-16

ԱՆՍՏԱՆԻ ԿԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱՎԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

հունիսի 2016 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

Մ-7/3

ՀԱՅԿԱՎԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՅՎՈՂ «ԿԱՌՈՒՑՆԷ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՏԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ՎՐԱՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունիսի -ի N 07/80-2/16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունվարի -ի N 02/14/16, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2016 թվականի հունիսի -ի N 24/16, Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հունիսի -ի N 06/3-4/1-16 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2016 թվականի հունիսի -ի N 02/16.1/16 եզրակացությունները, որ ո ղ ու մ է.

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 199,958,015 դրամ արժողությամբ «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝
1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանի կողմից
«03» հունիսի 2016թ.

« Կ ա ռ ու ց ե ն ք դ ի ի մ ա կ ա յ ա յ ու ն և ի ա մ ա յ ն ք ն Ե Ր Բ Ե Ր Վ ր ք ա ս տ ա ն ու մ և Հ ա յ ա ս տ ա ն ու մ »
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Նվազեցնել Հայաստանի առավել աղետալուց գյուղական համայնքներում բնակվող մարդկանց խոցելիությունը և ամրապնդել նրանց էխնայալությունը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Եվրոխորտրոի մարդավրական օգնությունների բաժինը և Դանիական, Իլյանդական և Ալկտրիական կարմիր խաչի ընկերությունները
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՀՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Շիրակի մարզ - Գյումրի, Արթի, Արաբի, Սառնաղբյուր, Անուշավան, Փամիկ, Մեծ Մանթաշ, Լոր Կյանք, Բենիամին, Ագատան, Պեճգաշեն, Մեծ Սեպասար, Կապա, Կեթի, Շիրակ, Արեգմարտն, Ջաջուռ, Ջորաշեն, Շիրակավան, Բերդաշեն, Բագրավան, Մերդաշատ, Բավրա, Ջրափի, Լանջիկ, Ախուրիկ և Թավշուտ քաղաքային և գյուղական համայնքներ:
6.	Ծրագրի բյուջեն	199,958,015 ՀՀ դրամ /375,000 եվրո/ - առանց ԱԱՀ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Շիրակի մարզ - Գյումրի և Արթի քաղաքային համայնքների, ինչպես նաև ծրագրի առաջին երկու փուլերում արդեն իսկ ընդգրկված/գործող Արաբի, Սառնաղբյուր, Անուշավան, Փամիկ, Մեծ Մանթաշ, Լոր Կյանք, Բենիամին, Ագատան, Պեճգաշեն Մեծ Սեպասար, Կապա, Կեթի, Շիրակ, Արեգմարտն Ջաջուռ, Ջորաշեն, Շիրակավան, Բերդաշատ, Բավրա, Ջրափի, Լանջիկ, Ախուրիկ և Թավշուտ գյուղական համայնքների բնակչություն: Համայնքների ընտրությունը կատարվել է Շիրակի մարզային իշխանության և մարզային Փրկարար ծառայության հետ համատեղ՝ հաշվի արձեղով համայնքների՝ արեւմտեղի նկատմամբ թիվը, արեւմտեղի կրկնման համախալանությունը, հարուցվող վնասները, խոցելի խմբերի առկայությունը, կարողությունները և այլն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.05.2016 - 30.09.2017

Մ-7/3

Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը

Շրջանի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ երեք ուղղություններով՝

- 1. Համայնքի նախապատրաստվածություն
- 2. Դպրոցների անվտանգություն
- 3. Ռիսկերի բացահայտում և Ազդարարում

Շրջանի շրջանակներում ուսուցողությունները՝ նախատեսված են հետևյալ հիմնական գործողություններով՝

- 1. Առաջին ուղղություն
 - 1.1. Ներգրավել նոր համայնքային կամավորական թիմերի (ՀԿԹ) անդամներ /ժամանակահատված՝ 01.05-20.06.2016թ.:/:
 - 1.2. Կազմակերպել դասընթացներ/թարմացման դասընթացներ/հրահանգչային դասընթացներ 25 ՀԿԹ-ների համար /բյուջեն՝ 17.724.375 դրամ, ժամանակահատված՝ 20.06-31.08.2016թ. և 01.04-31.05.2017թ.:/:
 - 1.3. Տրամադրել անհատական պաշտպանության գույք, գործիքներ և անհատական հանդերձանք նոր հիմնված 7 ՀԿԹ-երին և նոր մասնագիտական գույք հիմնված 18 ՀԿԹ-ին /բյուջեն՝ 49.330.000 դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.07.2016թ.:/:
 - 1.4. Կազմակերպել դաշտային ուսումնավորություն 25 ՀԿԹ-երի մասնակցությանը /բյուջեն՝ 3.017.000 դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.07.2017թ.:/:
 - 1.5. Մշակել ՀԿԹ շրջանակային փաստաթուղթ, համագործակցելով համապատասխան գործընկերների հետ /ժամանակահատված՝ բյուջեն՝ 80.000 դրամ, 01.09-31.12.2016թ.:/:
 - 1.6. Թարմացնել/ վերանայել Շիրակի մարզի փոխընդուն հուշագիրը կապված ՀԿԹ-երի պահպանման և զարգացման հետ և ներգրավել նոր հիմնված 7 ՀԿԹ-երը /բյուջեն՝ 125.500 դրամ, ժամանակահատված՝ 01.09.2016թ. - 30.04.2017թ.:/:
- 2. Երկրորդ ուղղություն
 - 2.1. Ուսուցանել նորընտիր 87 դպրոցների ուսուցիչներին աղետի ընտանեկան պլանի (ԱՇՊ) վերաբերյալ /բյուջեն՝ 1.055.000 դրամ, ժամանակահատված՝ 15.09-15.10.2016թ.:/:
 - 2.2. Կազմակերպել ԱՇՊ մրցույթներ դպրոցի և մարզային մակարդակում, հաղթողներին պարգևատրել նվերներով /բյուջեն՝ 993.000 դրամ, ժամանակահատված՝ 15.10.2016թ. և 01.03.2017թ.:/:
 - 2.3. Դպրոցական աշակերտ չունեցող խոցելի ընտանիքներում ներկայացնել և

21 4/3

- մշակել ԱՇՊ, ՀԿԹ անդամների ներգրավումը և աջակցությունը /բյուջեն՝ 496.000 դրամ, ժամանակահատված՝ 01.11.2016թ. և 31.07.2017թ.:/:
- 2.4. Նորընտիր 7 համայնքների բնակչությանը և ծրագրում նոր ընդգրկված դպրոցների աշակերտներին տրամադրել տպագրված «Անվտանգ Հևտանիք» ձեռնարկը /բյուջեն՝ 19.800.000 դրամ, ժամանակահատված՝ 01.07-30.09.2016թ.:/:
- 2.5. Տպագրել իրազեկման տարբեր կյուբեր դպրոցների աշակերտների համար և ուսումնամեթոդական ձեռնարկներ ուսուցիչների համար /բյուջեն՝ 20.530.000 դրամ, ժամանակահատված՝ 01.07-30.09.2016թ.:/:
- 2.6. Կազմակերպել ուսումնական տարահանումներ թիրախային 170 դպրոցներում /ժամանակահատված՝ 01.02-31.03.2017թ.:/:
- 2.7. Շիրակի կրթության վարչությունը կազմում և շրջանառում է արձանագրություն, համաձայն որի բոլոր թիրախ դպրոցների դասիչները պետք է յուրաքանչյուր ամիս, դասընթացի 4 ժամերից 1 ժամը տրամադրեն աղետների ռիսկի նվազեցմանը վերաբերվող թեմաներին՝ համաձայն համատեղ մշակված ծրագրի /ժամանակահատված՝ 01.09.2016թ. և 31.05.2017թ.:/:
- 2.8. ԱՌՆ ազգային պատճիորմի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ ձևափոխել "Զարգի ԱՌՆ գրադարան" մոդել, այնուհետև տպագրել և մշակել մոդելի թվային տարբերակը բոլոր դպրոցներում տարածելու համար /բյուջեն՝ 8.160.000 դրամ, ժամանակահատված՝ 01.07-30.09.2016թ.:/:
- 2.9. Շիրակի մարզի կրթական ոլորտի շահագրգիռ կողմերին ներկայացնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մշակված 22 Արտակարգ իրավիճակների և Կրթության և գիտության նախարարների հրամանով հաստատվելիք "Զպրոցների աղետների կառավարման ուղղիցում" -ը /բյուջեն՝ 720.000 դրամ, ժամանակահատված՝ 01.10.2016թ.-31.05.2017թ.:/:
- 3. Երրորդ ուղղություն
 - 3.1. Հզորացնել ՀԿԹՎ մասնաճյուղերի կարողությունները կազմակերպելով ծրագրերի մշակման և արաջին օգնության դասընթացներ աշխատակազմի և կամավորների համար /բյուջեն՝ 859.500 դրամ, ժամանակահատված՝ 01.08.2016թ.-31.08.2017թ.:/:
 - 3.2. Աջակցել ԱՌՆ ազգային պատճիորմին հզորացնելու ռեսուրսների մոբիլիզացման կարողությունները, կազմակերպելով համապատասխան դասընթացներ և մշակված ծրագրերի որակական ստուգում /բյուջեն՝ 1.300.000 դրամ, ժամանակահատված՝ 01.08.2016թ.-31.08.2017թ.:/:
 - 3.3. Նախաձեռնել համայնքապետերի հանդիպումներ փորձի փոխանակման համար, որտեղ ներգրավված են ինչպես Շիրակի մարզի նախագահը, որտեղ փորձի փոխանակման

21 4/3

- համայնքները, «Կառուցենք անվտանգ և կարուն համայնքներ» ծրագրի թիրախային գյուղական համայնքները Լոռու մարզից, ինչպես նաև ՕԲՄՏԱՄ-ի ԱՌՆ ծրագրերի թիրախային համայնքները /բյուջեն 700.000 դրամ, ժամանակահատված՝ 01.02-30.04.2017թ./:
- 3.4 Իրականացնել խցեկիտության և կարողությունների գնահատում /խԿԳ/ 16 թիրախային համայնքներում /բյուջեն 5.500.800 դրամ, ժամանակահատված՝ 01.08.2016թ.-31.01.2017թ./:
- 3.5 Հիմնվելով ընդլայնված խԿԳ բացահայտումների վրա, համայնքների դիմակայունությանը նպաստելու նպատակով կազմել Համայնքի գործադրությունների պլան ուղղված աղետների նախապատրաստմանը և մեղմացմանը/կանխարգելմանը, ինչպես նաև առողջապահական, սոցիալական և տնտեսական ոլորտներին վերաբերվող հարցերին /ժամանակահատված՝ 10.01-31.03.2017թ./:
- 3.6 Ընդլայնել համայնքային ԱՌՆ գրադարանները՝ ԱՌՆ ազգային պատճառի միջոցով /բյուջեն 4.400.000 դրամ, ժամանակահատված՝ 01.07-30.09.2016թ./:
- 3.7 Կազմակերպել ԱՌՆ միջազգային օրվան նվիրված միջոցառումներ՝ նկարչական մրցույթ, որին կհաջորդի օրացույցի տպագրություն /բյուջեն 1.729.000 դրամ, ժամանակահատված՝ 01.10-20.12.2016թ./:
- 3.8 Աջակցել թիրախ համայնքներին իրականացնել խԿԳ արդյունքում բացահայտված և առաջնայնեցված փոքրածավալ ենթածրագրեր աղետների դիմի նվազեցման, սոցիալական, առողջապահական և տնտեսական ոլորտներում, ինչպես նաև թիրախ դպրոցներին տրամադրել հրդեհային անվտանգության գույք (հակահրդեհային վահանակ և կրակամարիչ) և տարահաման նշաններ /բյուջեն 25.366.000 դրամ, ժամանակահատված՝ 01.06-30.09.2016թ. և 01.04-30.09.2017թ./:
- 3.9 Տրամաբարի վտանգի տակ գտնվող թիրախային 8 համայնքներում հիմնել Վաղ ազդարարման համակարգ, ներառյալ տեխնիկական և ծրագրային ապահովումները /բյուջեն 1.120.000 դրամ, ժամանակահատված՝ 01.08-31.10.2016թ./:
- 3.10 Տրամաբարի վտանգի ներքո գտնվող առավել ռիսկային թիրախային համայնքներում կազմակերպել իրազեկման բարոզաբարձրչալներ թիրախային համայնքներում /բյուջեն 1.222.000 դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.08.2017թ./:
- 3.11 Տրամաբարի վտանգի ներքո գտնվող առավել ռիսկային թիրախային

21. 7/3

- համայնքներում կազմակերպել ուսումնավարժանքներ /բյուջեն 639.000 դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.08.2017թ./:
 - 3.12 Կազմակերպել ծրագրի մեկնարկի և ավարտի հանդիպումներ ազգային մակարդակում և մասնակցել համապատասխան միջազգային հանդիպումներին /բյուջեն 900.000 դրամ, ժամանակահատված՝ 01.05.2016թ.-30.09.2017թ./:
 - 3.13 Դարբերաբար կազմակերպել մարզային համակարգման հանդիպումներ Շիրակի մարզում /բյուջեն 465.250 դրամ, ժամանակահատված՝ 01.06.2016թ.-30.09.2017թ./:
- Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կամում են **33.725.590** դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային կուրսերի և այլ ծախսեր:
- Չեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝
1. Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ձևավորված 18 համայնքային թիմերի և նախատեսված 7 նոր թիմերի համար ձեռք է բերվելու համապատասխան գույք /ստրակարտ, պարան, անհատական հագուստ, ուսապարկ, վրան և այլն/, որի գումարը կազմում է **49.330.000** դրամ: Տրամադրված գույքը հնարավորություն կընձեռի թիմերին օպերատիվ արժագանքելու տեղական արտակարգ իրավիճակներին:
 2. Ընակության իրազեկման բարձրացման միջոցառումների իրականացման և դպրոցներում ԱՌՆ նշակալիքի սերմանման նպատակով տպագրվելու են ուսումնական նյութեր, դպրոցներում հիմնվելու են ԱՌՆ գրադարաններ և ընդլայնվելու են համայնքային ԱՌՆ գրադարանները՝ ԱՌՆ ազգային պատճառի միջոցով, որի գումարը կազմում է **52.890.000** դրամ:
 3. Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված հանդիպումները, դասընթացներն ու այլ նմանատիպ միջոցառումները իրականացնելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ, սնունդ, ուսումնական վարժանքների համար՝ անհրաժեշտ պարագաներ /առաջին օգնության արկղ, կրակմարիչ և այլն/, վճարվելու է մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, որի գումարը կազմում է **37.526.425** դրամ:
 4. Թիրախային համայնքների վաղ ազդարարման կարողությունները գաղտնիանալու համար տրամադրվելու է տեխնիկական ապահովություն և գույք:

21. 7/3

10. Չեռք բերվող (ներունվոր) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ժ. 7/3

0010, Երևան, Մեխիբ Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

01.06.2016թ. № 07/80-2/15

Ձեռ № _____

«Հայկական ժրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 31.05.2016թ. N 15/15.9/7742-16 գրության՝ կապված «Հայկական կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է ծրագրի 9-րդ կետում ներկայացված ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման (ներմուծման) գործարքներ ենթադրող միջոցառումների նկարագիրն ու դրանց արժեքները ևս ներառել ծրագրի 10-րդ կետում:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան

Կատարող՝ Նոնա Կարապետյան
հեռ. 011 910-437

039/14842-16

01.06.2016

<p>6</p> <p>որի գումարը կազմում է 1.120.000 դրամ:</p> <p>5. Համայնքային փոքրածավալ կանխարգելյան ծրագրերի հասար ձեռք են բերվելու նյութեր, իսկ շահառու դպրոցներին տրամադրվելու է հրդեհային անվտանգության գույք, որի գումարը կազմում է 25.366.000 դրամ:</p> <p>6. Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կատում են 33.725.590 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատակարծերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր:</p>	<p>Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 33.725.590 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատակարծերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր:</p>	<p>Ծրագիրը իրականացվելու է Շիրակի մարզկենտրոնում, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության՝ հատկապես նրա ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի և Շիրակի մարզային փոկարտ ծառայության հետ, "Աղետների ռիսկի նվազեցման ազգային պատճիոր" հիմնարկում, ՀՀ Կրթության և գիտության նախարարության և նրա Շիրակի մարզային ստորաբաժանում, 27 թիրախային բաղադրյալ և գյուղական համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Վերոնշյալ կառույցների, ինչպես նաև մարզում գործող այլ տեղական և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ պատշաճ համագործակցություն և համակարգում ապահովելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում կազմակերպվելու են եռամսյա մարզային համակարգման համոխարմներ, որը ղեկավարվելու է Շիրակի մարզային իշխանությունների, մարզային Փրկարար ծառայության և Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից:</p>	<p>Նախատեսվում է տրամադրել եռամսյակային, միջանյալ և ավարտական հաշվետվություններ Դանիական կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նպիտությունների կողմից: Հայկական կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է Շիրակի մարզում իրականացվող գործողությունների ամսօրյակական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի ավարտական</p>
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</p>			
		<p>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	
			<p>13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>

Ժ. 7/3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

Դ. 7/3

0010, Երևան, Մեփր-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

02.06.2016 № 07/80-2/16058-16

Ձեռք № _____

«Հ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր 31.05.2016թ. N 07/80-2/15478-16 գրության և հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 03.06.2016թ. N 242 գրությամբ ներկայացված «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի լրամշակված տարբերակը, հայտնում ենք, որ անհրաժեշտ է ծրագրի 10-րդ կետում առավել հստակ և միմյանցից առանձնացված նշել նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (ներմուծման) գործարքներ ենթադրող ծախսերի համառոտ նկարագիրը, դրանց ծավալներն ու նախատեսվող արժեքները:

Հարգանքով

Ատոմ Զանցուղայան

038/15658-16

02.06.16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Դ. 7/3

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 Էլ. փոստ՝ arsen.mkrtyan@justice.am

02/14/6898-16
06.06.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն «Հ կառավարության 2016 թվականի մայիսի 31-ի 15/15.9/7742-16 հանձնարարականի» հայտնում ենք, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի որոշման նախագծի, ծրագրի վերնագրի և ծրագրի դրույթների միջև առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի որոշման նախագծի վերնագրի և ծրագրի վերնագրի համաձայն ծրագիրն առնչվում է նաև Վրաստանի համայնքներին, մինչդեռ ծրագրի դրույթներում վերջիններին մասին հիշատակված չէ և բարեգործություն ստացող են հանդիսանում միայն Հայաստանի Հանրապետության համայնքները:

Ելնելով վերոնշյալից ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Հ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՅԱՆ

035/15322-16

06.06.2016



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

մ. 7/3

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8
0054, Ереван, Давидашен 4, ул. А. Микояна 109/8
109/8, A. Mikoyan str., Davidashen 4, Yerevan 0054
Հեռ./Тел./Tel. (+374 10) 31 77 02
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 36 34 49
Էլ. փոստ / E-mail: mes@mes.am

N 1/17.2/6800-16
07.06.2016 թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ Ս. Տեր-Սիմոնյանին

Ի պատրաստան Ձեր 30.05.2016թ.
N 15/15.9/7742-16 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք
դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին»
Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Ա. Երիցյան

Կար. Փրկարար ծառայություն
2 Մովսիսյան
Հեռ. 010-31-78-26

052/15462-16
07.06.16թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

06/3-4/17319-16
07.06.16թ.
մ. 7/3

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 31.05.2016թ. N15/15.9/7742-16 գրությանը կից ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող
«Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի
մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին
վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոնյան

Ընթացակարգերի բաժին, հեռ. 011800330

044/15391-16
07.06.16թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ**

<< 06 >> 06 2016թ.
N: 09/3203-16

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16
ինժ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

207/3

**« ԿՈՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՇՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱԿ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Ձեր՝ 31.05.2016թ.
թիվ՝ 15/15.9/7742-16

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան
Մարզպետարանում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման-հանձնաժողովի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:
Մարզպետարանը ևս կարևորում և գնահատում է ծրագրի նշանակությունը և չի առարկում այն բարեգործական որակելուն:

Հարգանքով՝

Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

կատ Հ. Արշակյան
/0312 3-16-26/

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Հայկական կարմիր խաչի կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» որոշման նախագիծի կազմակերպմամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Գիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p align="center">«Հ Ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Որոշման նախագիծը հետ, հայտնում ենք, որ անիրաժեշտ է ծրագրի 9-րդ կետում ներկայացված ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման (ներմուծման) գործարքներ ներառել միջոցառումների նկարագիրն ու դրանց արժեքները ևս ներառել ծրագրի 10-րդ կետում: Ի լրումն մեր 31.05.2016թ. N 0780-2/15478-16 գրության և հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 03.06.2016թ. N 242 գրությամբ ներկայացված «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի լրանցված տարբերակը, հայտնում ենք, որ անիրաժեշտ է ծրագրի 10-րդ կետում առավել հստակ և միայնակից առանձնացված նշել նախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (ներմուծման) գործարքներ ներառելու ծախսերի համատար նկարագիրը, դրանց ծավալներն ու նախատեսվող արժեքները:</p>	<p>Առաջարկությունը հաշվի է առնվել լրանցված ծրագիրը կցված է:</p> <p>Կազմակերպության կողմից ներկայացված պարզաբանումը կցված է:</p>
<p align="center">«Հ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Հայտնում ենք, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի որոշման նախագիծը, ծրագրի վերնագրի և ծրագրի որոշման միջև առկա անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի որոշման նախագիծը վերնագրի և ծրագրի վերնագրի համաձայն ծրագիրն անջվում է նաև Վրաստանի համայնքներին, մինչդեռ ծրագրի որոշմանում</p>	<p align="center">207/3</p> <p>Կազմակերպության կողմից ներկայացված պարզաբանումը կցված է:</p>

196/15207-16
06.06.16



Armenian Red Cross Society

Հայկական Կարմիր խաչի ընկերություն

0015, Գ. Երևան, Պարոնյան 21/1, 3եռ.՝ (+374 60) 62 50 50, ֆաքս՝ (+374 60) 62 50 72
Էլ. փոստ՝ redcross@redcross.am, ինտ. կայք՝ www.redcross.am
21/1, Paronyan str., Yerevan, 0015, RA, tel. (+374 60) 62 50 50, fax: (+374 60) 62 50 72
E-mail: redcross@redcross.am, Web site: www.redcross.am

N 246

“ 08 ” 06 20 16 թ.

7/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆ՝ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա. ՄԿՐՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան ՀՀ Արդարադատության նախարարության դիտողությանը՝ կապված ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացված «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի վերնագրի խմբագրման հետ, թույլ տվեք տեղեկացնել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը ի սկզբանե դիմել է «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» անվանումով ծրագրի դրամաշնորհին: Սույն ծրագրի անվանման մեջ «Վրաստանում և Հայաստանում» նշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագիրը հանդիսանում է տարածաշրջանային, իրականացվում է Հայաստանում և Վրաստանում, որում նախատեսված են տարբեր տարածաշրջանային հանդիպումներ՝ փորձի փոխանակման և համակարգման նպատակով, որոնք տեղի են ունենալու Հայաստանում և Վրաստանում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ծրագրի անվանման մեջ հնարավոր չէ կատարել փոփոխություն:

Հարգանքով՝

Աննա Եղիազարյան
Գլխավոր քարտուղար

578

107 - 15570
08 06 16



Armenian Red Cross Society

Հայկական Կարմիր խաչի ընկերություն

0015, Գ. Երևան, Պարոնյան 21/1, 3եռ.՝ (+374 60) 62 50 50, ֆաքս՝ (+374 60) 62 50 72
Էլ. փոստ՝ redcross@redcross.am, ինտ. կայք՝ www.redcross.am
21/1, Paronyan str., Yerevan, 0015, RA, tel. (+374 60) 62 50 50, fax: (+374 60) 62 50 72
E-mail: redcross@redcross.am, Web site: www.redcross.am

N 249

“ 03 ” 06 20 16 թ.

7/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆ՝ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ - ԳԼՄԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ԶԱՆՋՈՒՂԱՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված դիտողությանը, թույլ տվեք տրամադրել պարզաբանում. հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրով նախատեսված ձեռք բերումների համար դեռևս չի սկսվել մրցույթային գործընթաց և մրցույթի արդյունքում միայն նոր կնքված պայմանագրի հնարավոր ձեռք բերվող ապրանքների քանակը և գինը՝ ներկայումս չենք կարող ներկայացնել ստույգ տեղեկատվություն գնվող ապրանքների քանակի և գնի վերաբերյալ: Ինչպես նաև, այս փուլում չենք կարողանում տրամադրել տեղեկատվություն ներմուծման ենթակա ապրանքների վերաբերյալ, որը նույնպես պարզ կդառնա մրցույթի արդյունքում: Ավելին, նմանափայ խնդիր ունենք նաև տպագրական կուլթերի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն ներկայացնելու հարցում, քանի որ կուլթերը դեռևս մշակման փուլում են, չունենք նրանց հստակ տեխնիկական բնութագիրը և յուրաքանչյուրի գինը և տպագրվող քանակը միայն պարզ կդառնա մրցույթի արդյունքում:

Խնդրում եմ ընդունել ներկայացված պարզաբանումը:

Հարգանքով՝

Գլխավոր քարտուղար

Աննա Եղիազարյան

ՀԱՍՏԱՏՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

հունիսի 2016 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան


20-7/4

«ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՔՈՎԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունիսի -ի N 07/80-2/16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հունվարի -ի N 02/14/16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հունիսի -ի N 06/3-4/1-16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ոստիկանության 2016 թվականի հունիսի -ի N 06/3-4/1-16 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 2016 թվականի հունիսի -ի N 02/16.1/16 եզրակացությունները, որոշում է.

